ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹՂԹՈՑՆ

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԵՒ ՇՆՈՐՀԱԶԱՐԴ ԵՂԲՕՐ ՄԵՐՈՒՄ ԼԵՒՈՆԻ ԺԳ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ ՀՌՈՎՄԱՅ[1]

ՈՂՋՈՅՆ ՅԻՍՈՒՍԱՒԱՆԴ

Շնորհազա՛րդ Եղբայր ի Քրիստոս.

Կարդացինք Ձեր Շրջաբերական Թուղթն, ուղղյալ համայն Տ. Ստեփանոս-Պետրոս Ժ. Պատրիարքին Կիլիկիո, առ կղերականս և առ հոտն հայազգի, որ ընդ տեսչությամբ Նորին Հովվության և ընդ հովանյավ Ձերո հոգևոր իշխանության։

Հիշյալ շրջաբերականով, ի միջի այլոց, հորդոր կկարդաք և պատվեր կտաք նաև յանուն Ձեր *և* Ձեր խոսքով *հրավիրել Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո զավակներն, որ* խելամուտ լլան և որոշեն հաստատել այն միությունն, հորմե իրենց նախնիքն հեռացան։

Առ այս կհայտարարենք նաև թե՝ պատրաստ ենք տարածյալ բազկօք դիմավորելու և ընդգրկելու, *թե արդեն հայք* միտյալ են ճշմարտությունն ընդունելու, երբ ճանչնան, և տրամադրյալ են միության, երբ իմանան թե անկե հեռացած են, և այս, *կըսեք*, պատմության բազմաթիվ ապացույցներով հաստատյալ է։

Այս բազմաթիվ կարծված ապացույցներն ես կթվեք Ձեր Շրջաբերականին մեջ, ինչպես են, Ձեր խոսքով ասենք, Գրիգոր Լուսավորչի ճանապարհորդությունն ի Հռոմ և յուր հավատոց հավաստիքն Սեղբեստրոս Ծայրագույն Քահանայապետին ներկայացնելն և յուր հնազանդությունը մատուցանելը. 1307-ին ի Սիս, 1313-ին յԱդանա գումարյալ ժողովները. Կոստանդին Ե. Կաթողիկոսի պատգամավորաց՝ ի Ֆլորենտյան Ժողովին՝ Եվգինեոս Դ. Քահանայապետին՝ իբրև Քրիստոսի փոխանորդին՝ իրենց հարգանքը մատուցանելն և սյունհոդոսական հրահանգագիրն իրենց հաղորդվիլն և նոցա հլությամբ և հոժարությամբ ընդունելը. Կիլիկիո Ազարիա Կաթողիկոսի 1585 ապրիլ 10 առ Գրիգոր ԺԳ. գրած թուղթը, *միով բանիվ*, նամակներն և ուխտագնացությունները *իսկ կեզրակացնեք, որ իբր թե «ինչպես Գրիգոր Լուսավորիչ առ Սեղբեստրոս, նույնպես և բազմաթիվ Հայրապետք Հայոց հնազանդություն ցուցած են առ Հայրապետն Հռոմա և փոխադարձաբար Հռոմա Հայրապետք «իրենց հայրական սիրույն հայտնի ապացույցներն երբեք հայոց վրայեն պակաս ըրած չեն, ասպնջականելու համար տեղեր պատրաստած են ի Հռոմ, հայազգի պատանեկաց կրթության համար խորհած են», և այլն և այլն։*

Այս է ահա՛, Շնորհազա՛րդ Եղբայր, Ձեր Շրջաբերականի համառոտությունն, և եթե ավելի համառոտենք, կգտնենք, որ Դուք բացարձակապես կհրավիրեք Հայոց Եկեղեցվո զավակներն «ի միություն ընդ Հռովմայ Եկեղեցւոյն» և, այս միությամբ «ի հնազանդություն Հռովմայ Քահանայապետին»։

Ինչո՞ւ կհրավիրեք.— «Ճշմարտությունը ճանաչելու և ընդունելու»։ Ի՞նչ է այդ ճշմարտությունը.— Հռոմա Քահանայապետաց «Գլխավորությունն», և այդ գլխավորության՝ «հլու հնազանդությունն»։ Բայց ինչպե՞ս հայք

---

1. Մելքիսեդեկ Արքեպիսկոպոս Մուրադյանցը, 1888 թվի օգոստոսի 23-ին ստորագրել է իր նշանավոր «Պատասխանի»ն Լևոն ԺԳ. պապին, որն իր գահակալության օրերին մի «Շրջաբերական Թուղթ» էր ուղղել հայ ժողովրդին, հրավիրելով նրան Կաթոլիկ Եկեղեցու գիրկը։ Արտատպում ենք այն, իբր պատասխան նաև Կարդինալ Աղաջանյանի «Հովվական Թուղթ»ին։—ԽՄԲ.։

ամենեն առաջ ի կշիռ պետք է դնեն թե ի՞նչ է զոր պիտի ընդունին։ Արժա՞ն է արդյոք զայն թողուլ և զայս ընդունիլ։

Այս քննությունն կարող է պարզել ամենը, և կհուսանք թե քննության կարևորությունն ևս կընդունիք հոժարությամբ։

Ձեր Շրջաբերականի հրավերն ընդունելու համար, Շնորհազա՛րդ Եղբայր, հայք պիտի թողուն իրենց նեկեղեցվո քրիստոնեական հիմնադրությունն ու առաքելականությունն. պիտի թողուն իրենց հոգևոր անկախությունն ու ազատությունը. պիտի թողուն իրենց նեկեղեցվո ժողովրդական ոգին, որ տիպն է նախնի դարուց քրիստոնեության. պիտի թողուն իրենց ամենասուրբ դավանությունն՝ թե ՄԻ Է ՀԻՄՆ ԵՒ ԳԼՈՒԽ ՆԵԿԵՂԵՑՒՈՅ— ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ. պիտի ուրանան իրենց հայրապետաց և վարդապետաց հեղինակություններն, որոնք ա՛յդպես վարդապետած են և ա՛յդպես ուսուցած. պիտի ուրանան իրենց նահատակներն ու մարտիրոսներն, որոնք նեկեղեցվո միակ և կենդանարար գլխեն չբաժնվելու համար՝ նահատակված են և մարտիրոսացած. պիտի նդովեն իրենց այն ընտիր և անձնդիր հովիվներն, որոնք իրենց նեկեղեցին անկախ և ազատ պահպանելու համար, իրը աննկուն սխոյաններ, դիմադրած են հունական և հռոմեական եկեղեցականաց հակառակությանց և հրապուրանաց. միով բանիվ, պիտի ուրանան 1854 տարվան մի նեկեղեցի, որ հԱրևելս ամենադառն ժամանակներու մեջ, պահպանած է քրիստոնեությունն, պահպանած է հայ անունն ու լեզուն, հայ հիշատակն ու հիշատակարանն, և ամեն հայածանաց ու արհավրաց մեջ եղած է իրենց տեղի ապաստանին, իրենց մխիթարության հանգրվանն՝ թե՛ երկնավոր և թե՛ երկրավոր կենաց համար։

Այսքան և առավել քան զայս պիտի թողուն հայք, և ի՞նչ պիտի ընդունին.— Հռոմեական նեկեղեցվո միությունն, որ նույնն է, Հռոմեական Քահանայապետին գլխավորությունն։

Քննության առնո՛ւնք այժմ այս գլխավորություն, Շնորհազա՛րդ Եղբայր, և տեսնենք թե կա՞ արդյոք Ավետարանի մեջ այդպիսի մի գլխավորության հիշատակություն. կա՞ արդյոք մի այնպիսի խոսք, որով հնար չինի եզրակացնել ըստ Շրջաբերականին թե՝ «Միայն Հռոմա նեկեղեցվո տվյալ է աստվածային խոստմամբ յուր վրանները կանդնել և յուր ապավանդակներն երկայնել աշխարհիս ամեն կողմ։

Շատ անգամ կարդացած ենք, Պատվելի՛ Եղբայր, և գիտենք, որ այս գլխավորության վարդապետությունը կհիմնեք Հիսուսի այն անվանակոչության վրա, որով զՍիմոն անվանեց Վեմ կամ Պետրոս և այն երբակի հարցումներուն ու պատվերներուն վրա, որով Պետրոսի սիրո հաստատություն ստուգելի զկնի, պատվիրեց արածել յուր հոտն։ Այս անվանակոչությունն ու պատվերն բնավ երբեք կարող չեն միապետական հովվության կամ առաքելապետության իմաստ ունենալ, ինչպես որ կհավատանք ի բոլոր սրտե՝ թե Պետրոս ինքն ևս այդպիսի իշխանապետություն երազած իսկ չէ, թո՛ղ թե ընդունած և գործադրած։ Քանզի Սիմոն ինքն էր, որ Ավետարանի միևնույն գլխուն մեջ թե՛ Վեմ անվանվեցավ յուր վարդապետեն և թե՛ սատանա։ Սիմոն-Պետրոս ինքն էր, որ սասիկ տրտմեցավ Հիսուսի Քրիստոսի երբակի հարցման վրա, քանզի խորապես կզգար, որ յուր երեք անգամ ուրացության տխուր հիշատակն կկրկնվի և յուր երիցս կրկնած սիրո խոստմամբ միայն նոր պիտի հավասարի մյուս աշակերտներուն՝ առաքելական կոչման մեջ. և ոչ թե իշխան կամ առաքելապետ պիտի կարգվի։

Առաքելոց պաշտոնին նկատմամբ բովանդակ Նոր Կտակարանն ներշնչված է հավասարության հոգով։ Հիսուսի պատվերն ընդհանուր է, ինչպես առաքյալներուն, նույնպես և յուր աշակերտներուն և հաջորդներուն՝ դարուց ի դարս. «Գնացէ՛ք այսուհետև,— ասաց Հիսուս,— աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս. մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն, որ ինչ պատուիրեցի ձեզ և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհիս։ Հիսուս հանապարդ յուր հավատացելոց հետ է և հարկ չկա բնավ, որ յուր տեղն մասնավոր տեղապահ կամ փոխանորդ կարգեն։ Հիսուս երբեք բացակա չէ յուր հոտեն. նա է մշտնջենավոր էմմանվելն, որ է Աստված ընդ մեզ։

Այո՛, ո՛չ միայն Պետրոս, այլև ամեն առաքյալք, մարգարեք, այլև նույնիսկ յուսավորիչք, հովիվք, վերատեսուչք, առաջնորդք և երիցունք ըստ աստիճանի իրենց հոգևոր տնտեսության, վեմ կոչված են շինվածույն նեկեղեցվո և գլուխ հոտին. բայց ո՛չ երբեք անսասան վեմ հաստատության, որ վերա բարձրացած է նեկեղեցվո շինվածն, և ո՛չ երբեք գլուխ՝ նեկեղեցվո բովանդակ մարմնույն. քանզի այդ ՄԻԱԿ ՎԵՄՆ և այդ ՄԻԱԿ ԳԼՈՒԽՆ է ինքն Տերն մեր Հիսուս Քրիստոս։ Նա է հիմն, նա է վեմն, որ կպահե և կպահպանե բոլոր շինվածը, և նեկեղեցվո անդամներն են նյութ այս շինվածույն։ Քանզի կաղաղակե նույն ինքն Պետրոս. «Դուք իբրև զվէմս կենդանիս շինիք տաճար հոգևոր յանարատ քահանայութիւն, մատուցանել զհոգևոր պատարագս հաճոյս Աստուծոյ ի ձեռն

Յիսուսի Քրիստոսի ...Դուք ազգ էք ընտիր, և այլն (Ա. Պետրոս Բ. 5—9)։ Նա է Գլուխ, որի հետ կապված են անդամները ամուր կերպով և լի են կենդանությամբ։ «Այլ ճշմարտեալք սիրով՝ աճեսցուք ի նա զամենայն, որ է Գլուխ, Քրիստոս. ուստի ամենայն մարմինն յօդեալ և պատշաճեալ ամենայն խաղալեօք տարաբերութեան, ըստ ազդեցութեան չափով ըստ իւրաքանչիւր մասին զաճումն մարմնոյ գործէ ի շինած անձին իւրոյ սիրով» (Եփես. Դ. 16)։

Ավելի՛ պարզենք, Շնորհազա՛րդ Եղբայր, որպեսզի բնավ տարակուսանաց տեղի չթողունք։

Քանի որ Եկեղեցին է հավաքումն ամեն ժամանակի և ամեն երկրի հավատացելոց, Ադամեն սկսած մինչև ի կատարած աշխարհի, անհնար է, որ մարդ մահկանացու և հետ ժամանակաց ծնյալ՝ վեմ հաստատության կամ գլուխ լինի մշտնջենավորին։ Քանզի գիտենք անշուշտ, որ իրենց փրկության հույսը Մեսիայի վրա դրած ամեն նահապետք և մարգարեք անդամք են Եկեղեցվո, ինչպես որ մենք քրիստոնյայքս Ավետարանով։

Քանի որ Եկեղեցին է արքայություն Աստուծո, արքայություն բարոյական, արքայություն Շնորհաց, միմիայն Քրիստոս է ուրեմն Թագավոր, Տնօրեն և Գլուխ։

Քանի որ Եկեղեցին է ո՛չ միայն ժողով փրկելոց, այլև նոցա, որք ակն ունին փրկություն ժառանգելու, ուրեմն Քրիստոս է միմիայն Գլուխ և Առաջնորդ փրկության։

Քանի որ Եկեղեցին է մի հոգևոր զինվորություն, մի հոգևոր սպառազինություն աշխարհի չարության և խավարի դեմ, մոլորության և ստության դեմ, ուրեմն Քրիստոս է միմիայն Զորագլուխ այս հոգևոր պատերազմին, և ո՛չ երբեք մարդ մահկանացու։ Այս Զորագլխի ներկայությունն է բոլոր հավատացելոց քաջալերությունը. «Գնացէ՛ք, ես ընդ ձեզ եմ.— Քաջալերեցարո՛ւք, զի ես յաղթեցի աշխարհի» (Հովհ. ԺԶ. 33)։

Եվ քանի որ այսպես է, Շնորհալի՛ Եղբայր, ի՞նչ է ուրեմն Ձեր հրավերն և առ ո՞վ կհրավիրեք. Քրիստոսե առ Քրիստո՞ս, թե՛ Քրիստոսե առ Պետրոս, և կամ Թադեոսե առ Պետրոս։ Եթե առ Քրիստոս կհրավիրեք, Հայաստանյայց Ս. Եկեղեցվո զավակներն արդեն կճանաչեն ու կդավանին, որ ՅԻՍՈՒՍ Է ՔՐԻՍՏՈՍՆ, ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԵՆԴԱՆՒՈՅ։ Նա է Վեմ հաստատության Եկեղեցվո և Գլուխ կենդանարար։ Նա է Օծյալն Աստուծո, որպես Թագավոր համօրեն մարդկության, որպես Գերագույն Մարգարե, որպես Քահանայապետ հավիտենական, որ պատարագեց յուր անձն մարդկանց փրկության համար։ Նա հայտնեցավ մարդկան, յուր պատմությունը խառնեց մարդու պատմության հետ, կրեց հանձն յուր լրումն Աստվածության և լրումն անմեղ մարդկության։ Նա եղև կենդանի կապ Աստուծո և մարդկան մեջ, հաշտարար Արարչին՝ արարածույն հետ։ Հայք կհավատան, որ առանց այս ճշմարիտ դավանության չկա քրիստոնեություն, չկա Քրիստոնեական Եկեղեցի ո՛չ ի Հռոմ և ո՛չ հաշխարհի ուրեք, այլ միայն փուշի՝ արտասուքով խառնված։ «Եւ չիք այլով իւիք փրկութիւն, զի և ո՛չ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ, որով արժան իցէ կեալ մեզ» (Գործք Դ. 12)։

Այս չէ՛ արդյոք, Շնորհազա՛րդ Եղբայր, և Ձեր խոստովանած Քրիստոսն, և ինչո՞ւ արդյոք հրավեր Քրիստոսե առ Քրիստոս։ Ի՞նչ բանի կարող են ծառայել սույն օրինակ հրավերներն, եթե ոչ կասկած և վարանք տարածել հավատացելոց մեջ, վեճ ու պայքար հարուցանել քրիստոնյա եղբարց մեջ և առիթ տալ որ օրավուր ավելի ծավալի սկեպտականությունն, որ եթե չենք սխալիր, և եթե կներեք ասել, ծնունդ առավ ա՛յն օրեն, երբ մոռցվեցավ քրիստոնեական ընկերության նշանաբանն, «Արտաքոյ Քրիստոսի չի՛ք փրկութիւն» (քրիստոնեից), և քարոզվեցավ թե «Արտաքոյ Հռովմեական Եկեղեցւոյ չիք փրկութիւն»։

Բայց դուք թերևս կհրավիրեք Քրիստոսե առ Պետրոս և կամ Բարթուղիմեոսե առ Պետրոս։ Եթե Քրիստոսե առ Պետրոս կհրավիրեք, հայտ է թե կկոչեք ի Տյառնե առ ծառայն, ի Վարդապետե առ աշակերտն, ի Փրկչե առ փրկյալն, հաստվածային հպատակութենե ի մարդկային հպատակություն։ Եթե Բարթուղիմեոսե առ Պետրոս կհրավիրեք, հայտ է թե կկոչեք նմանե առ նմանն, աշակերտակցեն առ աշակերտակիցն, առաքյալեն առ առաքյալն, որոց երկոքյան ևս միևնույն ուսմամբ դաստիարակված են, միևնույն Ս. Հոգին ընդունած են, միևնույն առաքելական պատվերն առած են և միևնույն վարձուց խոստմամբ քաջալերված են։ Իսկ առաջնության խնդիր կամ գլխավորության վեճ առաջին օրեն արմատաքի խլված է իրենց երկնավոր Վարդապետի և Օրենսդրի վճռով. «Որ կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ» (Մատթ. Ի. 27)։

Արդ, ինչո՞ւ դիմեն ուրեմն հայք ի Տյառնե առ ծառայն և կամ հառաքյալե առ առաքյալն և լինին աստվածուրաց կամ մարդապաշտ։ Քանզի մենք ցուցինք, որ Պետրոս չէ Քրիստոս, բայց ինչ որ է Պետրոս, նույնն է Թադեոս։

Սակայն այդ հրավերին առաջին հեղինակը Դուք չեք, Շնորհազա՛րդ Եղբայր, և ոչ իսկ միայն Դուք։ Այդ հրավերն կրկնված է երկար դարեր, և կրկնված է այն դժբախտ օրեն, երբ Եկեղեցվո Արևելյան և Արևմտյան,

և կամ հունական և հռոմեական բաժանումները տեղի ունեցան։ Հայաստանյայց Եկեղեցին մնացած է իր նախնական վիճակին մեջ և կամեցած չէ հարիլ ո՛չ այս ո՛չ այն բաժանման, որպեսզի չկորուսանե յուր անկախությունն և չլինի աղախին, այլ մնա Հարսն ազատ յուր երկնավոր ազատարար Փեսային։ Տարակույս չկա, որ այս առթիվ ո՛չ միայն հրավեր և հրապուլրներ եղած են իրեն, այլի կրած է նախատինքներ, հալածանքներ և սպառնալիքներ...։

...Հարկ չենք տեսներ խոսիլ Ձեր Շրջաբերականի մեջ հառաջ բերված ՊԱՏՄԱԿԱՆ կարծված ԱՊԱՑՈՒՑՑՆԵՐՈՒ մասին, որոնք բազմիցս հերքված են և արդեն բնավ կարեվորություն չունին, քանի որ Հայաստանյայց Ս. Եկեղեցին, ըստ յուր քրիստոնեական և առաքելական իրավանց, չընդունիր բնավ որևիցե մասնավորի, թեև լինի Կաթողիկոս, սկսած ձեռնարկն կամ փորձ, երբ չի կրեր ընդհանուր ազգի հավանության կնիքն և արտաքո է յուր դարավոր դավանության։ Սակայն միշտ ամբարիշտ պիտի ճկատենք այն ձեռքն, որ հանդգնած է մի առասպելական դաշնագրով՝ Սեղբեստրոսին Նարուգոդոնոսորի դեր վերընծայել, իսկ Գրիգոր Լուսավորչին՝ մարդապաշտի։

Թողունք այս ամենն, Շնորհաղա՛րդ Եղբայր, միթե Դուք ինքնին իսկ չե՞ք խոստովանիր, որ Քաղկեդոնի ժողովեն առաջ ո՛չ առաքելապետական խնդիր կար, և ո՛չ գլխավորության։ Միթե չե՞ք գիտեր, որ Եկեղեցվո ամեն հովիվներ ու վարդապետներ խորասուզված էին աստվածային սիրո անհուն խորության մեջ և խաչի բարձրութենեն զատ ուրիշ բարձրություն չէին տեսներ, ո՛չ դահ, ո՛չ աթոռ, ո՛չ առաջնություն, ո՛չ գլխավորություն։ Առե՛ք առաքյալներն, առե՛ք աշակերտներն, առե՛ք Լուսավորիչներն, առե՛ք Ոսկեբերաններն ու Օգոստինոսներն, ի՞նչ է իրենց պարծանքն.—ԽԱՉՆ, որու առջև ի ծունր կիսոնարհին գետնամած. ի՞նչ է իրենց նշանն.—ՍԵՐՆ, որ միության կեղրոն է քրիստոնեից համատարած։

Արդ. Պատվակա՛ն Եղբայր, մեր պաշտած Աստուծո անունը ՍԵՐ է, մեր երջանկության ճշմարիտ անունը ՇՆՈՐՀՔ. իսկ մեր վշտոց կոչումը՝ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ։ Ինչպես ամեն ճշմարիտ քրիստոնյայք, նույնպես և Պետրոս, ո՛չ գլուխ է Եկեղեցվո և ո՛չ գլուխ առաքելոց, այլ որդի Շնորհաց։ Բայց գիտեք անշուշտ, որ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆն հաճախ կդա այն ժամանակ, երբ կմոռանք, որ Շնորհաց որդի ենք. երբ կմոռանք, որ մեր կոչումն է պաշտել և ո՛չ պաշտվիլ, երբ կմոռանք, որ մենք սխալական ենք. երբ կմոռանք, որ մենք Սիրո տարածման պաշտոնյա ենք և ո՛չ բաժանման ու տիրապետության։

Ուրեմն մերժե՛նք թյուր մեկնություններն, Շնորհաղա՛րդ Եղբայր, փարի՛նք Ավետարանին և հայցենք ասելով. «Ո՛վ Տեր, վառե՛ ամեն սիրտ կենդանի սիրով և ամեն միտք ճշմարիտ իմաստությամբ, որ ամենքը ճանաչեն քո անունդ, որ է ՍԵՐ։ Մի՛ թողուր, որ մարդիկ որոնեն քո անունդ միայն իրենց մտածության օրենքներուն մեջ, այլ քո փրկարար Խաչի ճառին մեջ, հորում ամենայն գանձք իմաստության և գիտության ծածկյալ կան։ Թո՛ղ հավիտյան դրոշմվի մեր խղճի և սրտի վրա քո այն պաշտելի և մխիթարիչ անունն, որով անվանեցիր զՔեզ Թեոդեհեմի անշուք մսուրին մեջ, Գեթսեմանի պարտիզին մեջ, և Գողգոթայի բլրակին վրա։ Տո՛ւր, տո՛ւր մեզ, Տե՛ր, տո՛ւր կարողություն, որ Սերդ թագավորեցնենք երկրի վրա և հավերժացնենք հերկինսա։

Այս է ահա՛, Երջանի՛կ Եղբայր, առ Շրջաբերականն Ձեր մեր պատասխանին, հորում, ինչպես պիտի նկատեք, միակ կետ նպատակի ունեցած ենք պատկերել ճշմարտությունն յուր հատուկ պատկերով, որպեսզի ակներև տեսնվի թե՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին ո՛չ մոլորած է, ո՛չ ճշմարտութենե հեռացած և ո՛չ կարոտ հրավիրանաց ի դարձ ուղղության։

Ներեցե՛ք միայն, եթե մեր պատասխանագրության մեջ, Ձեր վեհ անձին նկատմամբ ի գործ դրած չենք մեծահնչյուն մակդիրներ կամ տիտղոսներ. քանզի գգուշացած ենք, որ մի՛ գուցե հետ ժամանակաց՝ մեր տված պատվանուններեն իսկ գլխավորություն ճանաչելու եզրակացություններ հանվին (ինչպես որ այսպիսի հետևությանց ենթարկված են առաջնոց ոմանց թղթակցություններն)։ Մանավանդ թե անտարակույս ենք, որ Դուք ինքնին, թեև Ձեր իմաստուն կենցաղագիտությամբ այսոր կայսերաց, թագավորաց և իշխանաց ակնածանքն անդամ գրված եք, բայց անշուշտ սիրող եք նախնի դարուց քրիստոնեական պարզ հորջորջմանց։

Ողջ լեռո՛ւ ի Տէր, Երջանի՛կ Եղբայր, և վստահ ի սէր մեր եղբայրական, որով մնամք Տաճայ Յիսուսի Քրիստոսի և կամօք նորին սպասաւոր Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏՅԱՆՑ

23 օգոստոս 1888

Կոստանդնուպոլիս

Գըզել-Թորրաք